ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՊԱԳՐՎԱԾ ԳՐՔԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/45

ք. Երևան «13» 07 2018թ.

ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ Գ. Մխեյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 561600 (հինգ հարյուր վաթսունմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման

արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱԺ աշխատակազմ	«Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ
ք. Երևան, Բաղրամյան պող.19	Ք.Երևան, Պարոնյան 6, բն. 28
ՀՎՀՀ 00008519	«ԱՅԴԻ Բանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 11815004507800
Հ/Հ 900011020089	ՀՎՀՀ 02547465
ՀՀ ԱԺ աշխատակազմի	Տնօրեն Ա.Սարգսյան
ղեկավարի առաջին տեղակալ	
Գ. Միսեյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 13 » 07 2018 թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/45 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողի անվանումը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը՝ Նախատեսվում է գնել 2018թ. 3-րդ եռամսյակ
1	22111200/2	Տպագրված այլ գրքեր Юрайт	Юрайт ՌԴ	КОНСТИТУЦИОННЫЕ ПРАВА ЛИЧНОСТИ И ИХ ЗАЩИТА, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Белик Н. В., հրատարակչություն՝ Юрайт, 2018թ., 195 էջ, ISBN 9785991648189	հատ	10300	10300	1	ՀՀ ԱԺ ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19	1	3-րդ եռամսյակ
2	22111200/3	Տպագրված այլ գրքեր ИНФРА-М	ИНФРА-М ՌԴ	Государственное устройство федераций в составе Европейского союза: Учебное пособие, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Лексин И.В., հրատարակչություն՝ ИНФРА-М, 2017թ., 270 էջ, ISBN 9785819904763	հատ	8000	8000	1		1	
3	22111200/4	Տպագրված այլ գրքեր Международные отношения	Международные отношения ՌԴ	История внешней политики Великобритании, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Капитонова Н.К., հրատարակչություն՝ Международные отношения, 2016թ., 839 էջ, ISBN 9785713315283	հատ	8000	8000	1		1	
5	22111200/6	Տպագրված այլ գրքեր Статут	Статут ՌԴ	Защита гражданских прав. Избранные аспекты, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Рожкова М., հրատարակչություն՝ Статут, 2017թ., 432 էջ, ISBN 9785835413164	հատ	9800	9800	1			
6	22111200/10	Տպագրված այլ գրքեր Международные отношения	Международные отношения ՌԴ	Правовая система США, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Шумилов В.М., հրատարակչություն՝ Международные отношения, 2017թ., 408 էջ, ISBN 9785713314347	հատ	6000	6000	1		1	
7	22111200/7	Տպագրված այլ գրքեր Аспект Пресс	Аспект Пресс ՌԴ	Европейский союз: история, институты, политика, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Кавешников Н. Ю., հրատարակչություն՝ Аспект Пресс, 2017թ., 320 էջ, ISBN 9785756709070	հատ	11200	11200	1		1	
9	22111200/8	Տպագրված այլ գրքեր Мысль	Мысль ՌԴ	Политический человек. Социальные основания политики, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Липсет М., հրատարակչություն՝ Мысль, 2016թ., 612 էջ, ISBN 9785244011777	հատ	6000	6000	1		1	
10	22111200/9	Տպագրված այլ գրքեր Проспект	Проспект ՌԴ	Будущее международного права. Сборник статей, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Бекяшев К., Абашидзе А., Бекяшев Д., հրատարակչություն՝ Проспект, 2017թ., 224 էջ, ISBN 9785392238965	հատ	8700	8700	1			
11	22111200/12	Տպագրված այլ գրքեր Канон+РООИ	Канон+РООИ ՌԴ	Философия и язык права, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Харт Г., հրատարակչություն՝ Канон+РООИ, 2017թ., 384 էջ, ISBN 9785883730169	հատ	7000	7000	1		1	
13	22111200/13	Տպագրված այլ գրքեր Красанд	Красанд ՌԴ	Макроструктурные изменения в системе мировой политики до 2030 года, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Кокошин А.А., Панов А.Н., 2016թ., 328 էջ, ISBN 9785396006218	հատ	5000	5000	1		1	

14	22111200/20	Տպագրված այլ գրքեր Москва,	Москва ՌԴ	Прогнозирование развития человечества с учетом фактора знания, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Орехов В., հրատարակչություն՝ Изд. Москва, 2017թ., 212 էջ, ISBN 9785990851757	հատ	6800	6800	1	ՀՀ Ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19	1	3-րդ եռամսյակ
16	22111200/21	Տպագրված այլ գրքեր Диалектика Вильямс	Диалектика Вильямс ՌԴ	Кристаллизация общественного мнения, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Бернейс Э.Л., հրատարակչություն՝ Диалектика Вильямс, 2017թ., 272 էջ, ISBN 978-5-8459-2002-7	հատ	11000	11000	1		1	
17	22111200/16	Տպագրված այլ գրքեր Алгоритм	Алгоритм ՌԴ	Наука политики. Как управлять народом, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Грамши А., հրատարակչություն՝ Алгоритм, 2017թ., 336 էջ, ISBN 978-5-906947-55-0	հատ	6000	6000	1		1	
18	22111200/22	Տպագրված այլ գրքեր Норма	Норма ՌԴ	Европейская модель конституционного судопроизводства. Монография, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Нуриев Г.Х., հրատարակչություն՝ Норма, 2017թ., 224 էջ, ISBN 978-5-91768-277-8	հատ	7000	7000	1		1	
23	22111200/24	Տպագրված այլ գրքեր Оригинал-макет	Оригинал-макет ՌԴ	Современное международное право: теория и практика, լեզուն՝ ռուսերեն, հրատարակչություն՝ Оригинал-макет, 2015թ., 432 էջ, ISBN 9785998802867	հատ	14800	14800	1		1	
24	22111200/34	Տպագրված այլ գրքեր Дело	Дело ՌԴ	Модели демократии, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Хэлд Д., հրատարակչություն՝ Дело, 2016թ., 548 էջ, ISBN 9785774908219	հատ	8800	8800	1		1	
25	22111200/25	Տպագրված այլ գրքեր Проспект	Проспект ՌԴ	Юридическая техника. Словарь-справочник, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Малько А.В., հրատարակչություն՝ Проспект, 2017թ., 247 էջ, ISBN 9785392247318	հատ	7500	7500	1		1	
26	22111200/26	Տպագրված այլ գրքեր Международные отношения	Международные отношения ՌԴ	Наднациональность в политике Европейского Союза, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Хохлов И.И., հրատարակչություն՝ Международные отношения, 2014թ., 304 էջ, ISBN 9785713314293	հատ	5000	5000	1		1	
27	22111200/28	Տպագրված այլ գրքեր Альпина Паблишер	Альпина Паблишер ՌԴ	Как выиграть выборы без административного ресурса: рекомендации опытного политтехнолога, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Ланкин Е., հրատարակչություն՝ Альпина Паблишер, 2015թ., 288 էջ, ISBN 9785961452297	հատ	7300	7300	1		1	
28	22111200/35	Տպագրված այլ գրքեր Альпина Нон Фикшн	Альпина Нон Фикшн ՌԴ	Никогда не сдаваться! ЛУЧШИЕ РЕЧИ ЧЕРЧИЛЛЯ, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Черчилль У., հրատարակչություն՝ Альпина Нон Фикшн, 2016թ., 648 էջ, ISBN 9785916715958	հատ	8500	8500	1		1	
30	22111200/36	Տպագրված այլ գրքեր АСТ	АСТ ՌԴ	Столкновение цивилизаций, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Хантингтон С., հրատարակչություն՝ АСТ, 2017թ., 576 էջ, ISBN 9785171021320	հատ	6900	6900	1		1	
31	22111200/30	Տպագրված այլ գրքեր Манн, Иванов и Фербер	Манн, Иванов и Фербер ՌԴ	Новые размышления о политике, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Адизес И. К., հրատարակչություն՝ Манн, Иванов и Фербер, 2017թ., 256 էջ, ISBN 9785000579398	հատ	11800	11800	1		1	
32	22111200/37	Տպագրված այլ գրքեր Международные отношения	Международные отношения ՌԴ	Эволюция европейской политики безопасности и обороны в условиях глобализации, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Шереметьев Д.В., հրատարակչություն՝ Международные отношения, 2017թ., 200 էջ, ISBN 9785713315733	հատ	7500	7500	1		1	
33	22111200/31	Տպագրված այլ գրքեր Аспект Пресс	Аспект Пресс ՌԴ	Международно-политический анализ. Научное издание, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Богатуров А.Д., հրատարակչություն՝ Аспект Пресс, 2017թ., 208 էջ, ISBN 9785756709025	հատ	8700	8700	1		1	

34	22111200/38	Տպագրված այլ գրքեր ACT	ACT ՌԴ	Мировой порядок, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Киссинджер Г., հրատարակչություն՝ ACT, 2017թ., 512 էջ, ISBN 9785179825777	հատ	7900	7900	1	ՀՀ ԱԺ գ. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19	1	3-րդ եռամսյակ
35	22111200/32	Տպագրված այլ գրքեր Питер	Питер ՌԴ	Проблемы души нашего времени, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Юнг Г., 2017թ., ISBN 9785496025676	հատ	9800	9800	1		1	
37	22111200/33	Տպագրված այլ գրքեր Либроком	Либроком ՌԴ	Социология и политика, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Коломийцев В.Ф., հրատարակչություն՝ Либроком, 2018թ.,400 էջ, ISBN 9785397051293	հատ	5000	5000	1		1	
38	22111200/27	Տպագրված այլ գրքեր Рипол Классик	Рипол Классик ՌԴ	Власть и политика, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Вебер М., հրատարակչություն՝ Рипол Классик, 2017թ.,431 էջ, ISBN 97 9785386098568	հատ	8800	8800	1		1	
39	22111200/40	Տպագրված այլ գրքեր Инфра-М	Инфра-М ՌԴ	Европейский парламент: политико-правовое исследование: Монография, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Саломатин А.Ю., Меликов А.В., հրատարակչություն՝ Инфра-М, 2016թ., 92 էջ, ISBN 9785369014431	հատ	6500	6500	1			
40	22111200/43	Տպագրված այլ գրքեր Либеральная миссия	Либеральная миссия ՌԴ	Психология политики, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Юрген А.Г., հրատարակչություն՝ Либеральная миссия, 2016թ., 40 էջ, ISBN 9785244011852	հատ	4800	4800	1		1	
41	22111200/41	Տպագրված այլ գրքեր Проспект	Проспект ՌԴ	Уголовная политика Европейского союза в сфере противодействия коррупции, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Краснова К.А., հրատարակչություն՝ Проспект, 2016թ., 88 էջ, ISBN 978-5-392-18810-9	հատ	4500	4500	1		1	
42	22111200/44	Տպագրված այլ գրքեր ИНФРА-М	ИНФРА-М ՌԴ	Философия политики и права: Энциклопедический словарь, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Аласания К.Ю., Аношкин П.П., Антонова В.Н. и др., հրատարակչություն՝ Ин ИНФРА-М, 2018թ., 550 էջ, ISBN 9785160129228	հատ	21500	21500	1		1	
43	22111200/42	Տպագրված այլ գրքեր Дашков и К	Дашков и К ՌԴ	Актуальные проблемы международных отношений и внешней политики в XXI веке, լեզուն՝ ռուսերեն, հրատարակչություն՝ Дашков и К, 2018թ., 410 էջ, ISBN 9785394029752	հատ	13800	13800	1		1	
45	22111200/45	Տպագրված այլ գրքեր Oxford University Press	Oxford University Press Միացյալ Թագավորություն	Law and Morality at War, լեզուն՝ անգլերեն, հեղինակ՝ Adil Ahmad Haque, հրատարակչություն՝ Oxford University Press, 2017թ., 304 էջ, ISBN 9780199687398	հատ	58000	58000	1		1	
46	22111200/51	Տպագրված այլ գրքեր Oxford University Press	Oxford University Press Միացյալ Թագավորություն	Atrocity Speech Law, լեզուն՝ անգլերեն, հեղինակ՝ Gordon Gregory S., հրատարակչություն՝ Oxford University Press, 2017թ., 464 էջ, ISBN 9780190612689	հատ	60000	60000	1		1	
47	22111200/46	Տպագրված այլ գրքեր Oxford University Press	Oxford University Press Միացյալ Թագավորություն	Holocaust, Genocide, and the Law, լեզուն՝ անգլերեն, հեղինակ՝ Bazyler Michael, հրատարակչություն՝ Oxford University Press, 2017թ., 375 էջ, ISBN 9780195395693	հատ	60000	60000	1		1	
48	22111200/52	Տպագրված այլ գրքեր Oxford University Press	Oxford University Press Միացյալ Թագավորություն	Human Rights and Personal Self-Defense in International Law, լեզուն՝ անգլերեն, հեղինակ՝ Jan Arno Hessbruegge, հրատարակչություն՝ Oxford University Press, 2017թ., 400 էջ, ISBN 9780190655020	հատ	60000	60000	1		1	
52	22111200/49	Տպագրված այլ գրքեր Hart Publishing	Hart Publishing Միացյալ Թագավորություն	Parliaments and Human Rights: Redressing the Democratic Deficit, լեզուն՝ անգլերեն, հրատարակչություն՝ Hart Publishing, 2017թ., 538 էջ, ISBN 9781509915453	հատ	39000	39000	1		1	

59	22111200/59	Տպագրված այլ գրքեր Международные отношения	Международные отношения ՌԴ	Великая шахматная доска, լեզուն՝ ռուսերեն, հեղինակ՝ Бжезинский З., հրատարակչություն՝ Международные отношения, 2016թ., 256 էջ, ISBN 9785171021337	հատ	4400	4400	1		1	

*Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա սեպտեմբերի 30-ը:

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Բաղրամյան պող.19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավարի առաջին տեղակալ
Գ. Մխեյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ
Ք.Երևան, Պարոնյան 6, բն. 28
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11815004507800
ՀՎՀՀ 02547465
Տնօրեն Ա.Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
« 13 » 07 2018 թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/45 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը /4234/	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** /4234/												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	22111200/2	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	5150	7725	10300	10300	10300	10300	**10300**
2	22111200/3	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	4000	6000	8000	8000	8000	8000	**8000**
3	22111200/4	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	4000	6000	8000	8000	8000	8000	**8000**
5	22111200/6	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	4900	7350	9800	9800	9800	9800	**9800**
6	22111200/10	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	3000	4500	6000	6000	6000	6000	**6000**
7	22111200/7	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	5600	8400	11200	11200	11200	11200	**11200**
9	22111200/8	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	3000	4500	6000	6000	6000	6000	**6000**
10	22111200/9	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	4350	6525	8700	8700	8700	8700	**8700**
11	22111200/12	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	3500	5250	7000	7000	7000	7000	**7000**
13	22111200/13	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	2500	3750	5000	5000	5000	5000	**5000**
14	22111200/20	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	3400	5100	6800	6800	6800	6800	**6800**
16	22111200/21	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	5500	8250	11000	11000	11000	11000	**11000**
17	22111200/16	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	3000	4500	6000	6000	6000	6000	**6000**

18	22111200/22	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	3500	5250	7000	7000	7000	7000	**7000**
23	22111200/24	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	7400	11100	14800	14800	14800	14800	**14800**
24	22111200/34	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	4400	6600	8800	8800	8800	8800	**8800**
25	22111200/25	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	3750	5625	7500	7500	7500	7500	**7500**
26	22111200/26	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	2500	3750	5000	5000	5000	5000	**5000**
27	22111200/28	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	3650	5475	7300	7300	7300	7300	**7300**
28	22111200/35	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	4250	6375	8500	8500	8500	8500	**8500**
30	22111200/36	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	3450	5175	6900	6900	6900	6900	**6900**
31	22111200/30	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	5900	8850	11800	11800	11800	11800	**11800**
32	22111200/37	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	3750	5625	7500	7500	7500	7500	**7500**
33	22111200/31	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	4350	6525	8700	8700	8700	8700	**8700**
34	22111200/38	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	3950	5925	7900	7900	7900	7900	**7900**
35	22111200/32	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	4900	7350	9800	9800	9800	9800	**9800**
37	22111200/33	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	2500	3750	5000	5000	5000	5000	**5000**
38	22111200/27	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	4400	6600	8800	8800	8800	8800	**8800**
39	22111200/40	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	3250	4875	6500	6500	6500	6500	**6500**
40	22111200/43	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	2400	3600	4800	4800	4800	4800	**4800**
41	22111200/41	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	2250	3375	4500	4500	4500	4500	**4500**
42	22111200/44	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	10750	16125	21500	21500	21500	21500	**21500**
43	22111200/42	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	6900	10350	13800	13800	13800	13800	**13800**
45	22111200/45	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	29000	43500	58000	58000	58000	58000	**58000**
46	22111200/51	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	30000	45000	60000	60000	60000	60000	**60000**
47	22111200/46	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	30000	45000	60000	60000	60000	60000	**60000**
48	22111200/52	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	30000	45000	60000	60000	60000	60000	**60000**

52	22111200/49	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	19500	29250	39000	39000	39000	39000	**39000**
59	22111200/59	Տպագրված այլ գրքեր	-	-	-	-	-	-	2200	3300	4400	4400	4400	4400	**4400**

ԳՆՈՐԴ
ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Բաղրամյան պող.19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավարի առաջին տեղակալ
Գ. Մխեյան

/ստորագրություն/
L.S

ՎԱՃԱՌՈՂ
«Սարգսյան Թրեյդ» ՍՊԸ
Ք.Երևան, Պարոնյան 6, բն. 28
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11815004507800
ՀՎՀՀ 02547465
Տնօրեն Ա.Սարգսյան

/ստորագրություն/
L.S

Հավելված N 3
«13» 07 2018 թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/45 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 13 » 07 2018 թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/45 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն